ՀՏԴ 82-145
Գրականագիտություն

Սիլվա ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱրՊՀ, գրականության և լրագրության ամբիոն, բ.գ.թ., դոցենտ

ԱՐՑԱԽԻ «ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ՎԱԶԳԵՆ ՕՎՅԱՆԻ «ԱՅՍ ՂԱՐԱԲԱՂՆ Է» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում վերլուծված է Արցախի ճշմարիտ բանաստեղծ Վազգեն Օվյանի քնարերգության գլուխգործոց հանդիսացող «Այս Ղարաբաղն է» երկը, որտեղ քննադատվում են Արցախի պատմությունը նպատակային կեղծող թրքազերի պատմաբանները, ինչպես նաեւ ապազգային դավաճանները: Շեշտվում է նաեւ այն փաստը, որ Օվյանը, ինչպես բոլոր մեծերը, զգացել է ազգային ազատագրական գալիք գարթոնքն Արցախում:

***Բանալի բառեր**: Ազգային- ազատագրական, հրաբուխ, Արցախ, Պապ ու Տատ, լեռներ, ոտանավորչի, խաչքար, խիզախ,զանգահար,ահեղասաստ,համազգային:*

С. Хачатрян

АРЦАХСКОЕ «Я СОЛНЦЕМ ВСКОРМЛЕННЫЙ ЯЗЫК МОЕЙ АРМЕНИИ ЛЮБЛЮ» В ПРОИЗВЕДЕНИИ «ЭТО КАРАБАХ» ВАЗГЕНА ОВЯНА

В данной статье исследуется шедевр лирики доподлинного арцахского поэта Вазгена Овяна «Это Карабах», в котором подвергаются критике целенаправленные искажения, совершаемые азербайджанскими историками и некоторыми «внутренними предателями». Кроме того, подчеркивается факт, что Овян предугадал пробуждение национального самосознания в Арцахе.

***Ключевые слова:** национально-освободительный, вулкан, Арцах, Татик Папик. горы, стихотворец, хачкар, смелый, звонарь, страшный, общенациональный.*

S. Khachatryan

"I LOVE THE SUN-NOURISHED LANGUAGE OF MY ARMENIA" OF ARTSAKH IN THE WORK "IT'S KARABAKH" BY VAZGEN OVYAN

This article examines the masterpiece of the lyrics of the original Artsakh poet Vazgen Ovyan "This is Karabakh," in which the purposeful distortions committed by Azerbaijan historians and some "internal traitors" are criticized. In addition, it is emphasized the fact that Ovyan foresaw the awakening of national self-consciousness in Artsakh.

***Key words**: national liberation, volcano, Artsakh, "Tatik Papik", mountains, poet, khachkar, brave, bell-ringer, terrible, national.*

«Այս Ղարաբաղն է» քերթվածքը /236 տող/, որը շիկացած հոգով գրված ասք է, անառարկելի գլուխգործոց է: Այն կարելի է նաեւ վեպ անվանել, որում խտացված են Արցախի պատմության հերոսական դրվագները:

Պատկերված է նաեւ անմխիթար ներկան: Այս անզուգական քերթվածքի յուրաքանչյուր տողը մի սպառազեն զինվոր է եւ հայրենիքը շենացնող պատվախնդիր արհեստավոր, հոգեւոր գանձեր երկնող ոսկեդարի գրիչ, չքնաղ եզերքով սքանչացած տաղանդաշատ նկարիչ, «վասն քծնանքի» տաղեր թխող խղճուկ ոտանավորչիներին խարազանող արվեստագետ եւ դարավոր թշնամու նենգության մասին աղաղակող Չենով Օհան: Չափածո այս երկի գործող անձերն են ՝ «փափուկ հոգով կոշտ լեռնցիները, որոնք, որքան բարի, նույնքան էլ անողոք են, երբ խաբում են իրենց. «ճակատը Մեսրոպյան գրով նախշած» վանքերը՝ մամռապատ խաչքարերով, հուսաբեկ ու չվող կռունկները, մեր անմահության խորհրդանիշ Պապ ու Տատի հուշակոթողը, Ամարասում դպրոց բացած Մեսրոպ Մաշտոցը, հեռատես Մելիք Ավանը եւ զգուշավոր Չենով Օհանը:

Բացասական տիպերն են՝ պատմությունն աղավաղող կեղծ պատմաբանները, ներքին տականք մատնիչները, իր «նեխած խորքով» ծովի հետ չափվել փորձող ճահիճը,որը մեր դարավոր թշնամուն է խորհրդանշում ու նաեւ՝ ներքին թշնամին՝պաշտոնական աթոռը գրկած բյուրոկրատը, ում համար փույթ չէ, որ Արցախը հայաթափվում է, կռունկները չվում, բները թափուր են մնում….Ադրբեջանի դրածո Կեւորկովը, ով ատրճանակի սեւ փողի նման տնկեց իր մատը եւ քարակույտ անվանեց մեր հավերժության խորհրդանիշ հանդիսացող « Մենք ենք մեր լեռները «կոթողը: Բանաստեղծը չի մոռանում իր սերնդակից վայ-պոետներին, որոնց իրավացիորեն շեփորահար անունն է տալիս, ովքեր առանց խղճի շողոքորթում են այդ դրածոյին:

Հպարտ հոգու ճախրանքով, անարդարությունների ու դավերի դեմ ծառացող հոգով գրված այս գործում փայլատակում է բանաստեղծի խիզախ տաղանդը: Սիրահարված իր բնաշխարհին՝ նա անխնա է Արցախի ներքին եւ արտաքին թշնամու նկատմամբ: Այս ստեղծագործությունը հագեցած է մտքի խորությամբ ու սեղմությամբ, աֆորիզմի հասնող բազմաթիվ արտահայտություններով.

«Հարատեւելու այն սուրբ տանջանքը, որ հավասար է խոլ խիզախության, հպարտ թեւելու այն վեհ խոյանքը, որ հատուկ է մեր թեւերին միայն եւ այն զրկանքը, որ մեզ լիաբուռ պարգեւեց տերը»: Բերենք փոխաբերական իմաստ պարունակող մի հատված.

Եւ զգույշ մի քիչ…
Հրաբուխն հանգած
Կարող է հանկարծ
Քո ոտքերի տակ բորբոքվել ներից,
Դարերով լռած իր խառնարանից
Նետել հուր ու բոց,
Հողմահար անել եւ բերդ, եւ ամրոց:

Հանգած հրաբուխն ազատատենչ ղարաբաղցու՝ իր տունն ու պատիվը պաշտպանելու անկոտրում կամքն է խորհրդանշում, բռնությունը

չհանդուրժելու նրա հողեղեն խառնվածքն ու պատմության դաժան քառուղիներում ազատության համար մղած նրա հերոսամարտերը: «Հանգած հրաբուխը» վերստին բոցավառվեց 1988-ին, երբ Արցախը ոտքի ելավ իր անկախության համար.

…Ծառը հզոր է, երբ արմատները
Խորն են մխրճված մայր հողի գրկում,

Գետի թիկունքում կանգնած է լեռը
Եւ դրա համար նա չի ցամաքում…

«Գետի թիկունքում» կանգնած է լեռն, անկասկած, մայր Հայաստանն է, որից չնայած հազար պատնեշով մեկուսացրել էին խլված Արցախը, մեր քոչվոր «բարեկամները», միեւնույն է, հեռվից հեռու ներկա էր նա՝ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ իր ոգեղեն զոյությամբ, սատար էր եւ է Արցախին: Մայր Հայաստանն իր մեծ ըղձասաց որդու՝ Հովհաննես Շիրազի «Ողբ Ղարաբաղի»-ով զգոնության ու զգաստության էր կոչում Արցախին, Կոմիտասի երգից զատված քեզ կուլ կտան մուղամները…

«Հին հրաբխի խառնարանում դեռ հուրը չի պաղել»,- որպես ահեղ սաստ ,ասքի վերջում, ի գիտություն բոլորի, հնչեցնում է բանաստեղծը, ասել է թե՝ ազատատենչ Արցախում ամեն պահ հնարավոր է հրաբխի ժայթքում՝ազատագրական պայքար: Այս ստեղծագործությունը Օվյանը գրել է 1979թ-ին, համազգային ազատագրական շարժումից մոտ 10 տարի առաջ: Այն ժամանակ, երբ իր սերնդակից « թմբուկ պոետները» ծալծլվում էին դրածո Կեւոկովի պատվիրած եղանակի տակ, նրան հաճոյանալու համար աչք փակում Բաքվի կողմից իրականացվող հակահայկական հրեշավոր քաղաքականության հանդեպ: Այս տարիներին՝70-ականներին է գրվել նաեւ «խիզախ մի գիրք», արցախցի գրող Լեոնիդ Հուրունցի «Մենության մեջ» կամ «Ինչպես հասցնեմ ճիչս սերունդներին», որը արձակ իրապատում է Արցախում Բաքվի կողմից հրահրվող հանցագործությունների մասին: Ահա թե ինչ է գրում Վազգեն Օվյանի ավագ ժամանակակիցը. «Եթե գրողը անարդարության ու դաժանության հանդիպելով, առանց հետեւանքների մասին մտածելու, նետվում է մարտի, նրան տաղանդավոր համարիր, խիզախությունը տաղանդի բաղադրիչն է»[1]: Տաղանդից զուրկ գրողը, որը հասել է իշխանության, կարող է անուղղելի վնաս պատճառել ամբողջ կոլեկտիվին: Կրծող նախանձով նա հեշտ ու հանգիստ կարող է կործանել ճշմարիտ տաղանդը, որպեսզի աչքը չծակի[2]«: Հենց տաղանդից ու նաեւ բարոյականությունից զուրկ ոտանավորչիներին է նկատի ունեցել Վազգեն Օվյանը, երբ «Այս Ղարաբաղն է» ասքում գրել է.

---

[1] ***Հուրունց Լ.***, *Ինչպես հասցնեմ ճիչս սերունդներին, Երեւան, «Տի առ ֆիքս», 2004, էջ 4:*

[2] ***Հուրունց Լ.,*** *Ինչպես հասցնեմ ճիչս սերունդներին, Երեւան, «Տի առ ֆիքս» ՍՊԸ, 2004, էջ 14:*

Եւ ծնել է նա շեփորահարներ,
Թմբուկ պոետներ հանգավոր ճառի,
Որ ներբողներ են անվերջ հորինել,
Վասն քծնանքի ու հոնորարի:

Լճացման, ստի, բռնության ու կեղծիքի թանձր խավարում Վազգեն Օվյանը հնչեցրեց «Այս դարաբաղն է» ստեղծագործությունը, որպես անառարկելի ճշմարտություն, որպես նվիրյալ որդու հպարտության հրավառություն եւ ծնրադիր սիրո ծես, որպես կեղեքող վշտի ճիչ ու անհաշտ ընդվզում, որպես բողոքի ու ցասման ոգեղեն լավա եւ զգաստության կոչով զանգ, որի դողանջները թեև խորհրդային գրաքննության պատճառով լռեցվել են գրողի ապրած ժամանակներում՝ այսօր հնչում են բարձր ու խրոխտ՝ տարածվելով հայրենի եզերքում եւ նրանից դուրս՝ ազգային արժանապատվության եւ հայրենասիրության սրբազան հուրը բորբոքելով թե ներսում, եւ թե դրսում:

Խավարի դժխեմ թագավորության մեջ, ուր թուրքն էր խրախճանում իր հոգու կեղծիքով ու հայատյաց գիշատչական բնազդներով, ուր խորհրդային գրաքննությունը մկրատում, ոչնչացնում էր հայրենասիրության անկեղծ պոռթկում պարունակող յուրաքանչյուր տող, Վազգեն Օվյանը լավ գիտեր, որ իր արվեստի իսկական գլուխգործոցները անտիպ են մնալու, գիտեր եւ գրում էր, քանզի զգում եւ տեսնում էր, որ ընթերցողը կարոտ է ճշմարիտ խոսի:

«Այսօր ազնվորեն գրված ամեն մի տողը, գալիք սերունդն ընկալում է որպես անգին ընծա: Շտապեք ասել այդ խոսքը, որն ընդունակ է լուսավորելու մեր օրերի անթափանց խավարը, խոսքի իշխանությունը փողի իշխանությունից զորեղ կլինի»[1],- գրել է Լեոնիդ Հուրունցը:

Իր գործընկերոջ պես,Վ. Օվյանը, բնավ չմտածելով գրաքննության մասին , ասել ու գրել է անթափանց խավարը ցրող իր խոսքը, ստեղծել ճշմարտապատում գեղարվեստական երկեր, որոնք այսօր, հիրավի, անգնահատելի ընծաներ են ներկա ու գալիք սերունդների համար:

«Այս Ղարաբաղն է» երկը հնչում է նաեւ որպես մարտահրավեր՝ ուղղված մեր ժողովրդի պատմությունն աղավաղողներին: Իր խրոխտ լեռների պես, ընդդեմ կեղծիքի և Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, ծառս է լինում Արցախի բանաստեղծ որդին, զգուշացնելով.

Առուն կարող է ժայռի պռնկին
Ջրվեժի ուժով ահեղ շառաչել…

Առուն, որ ժայռի պռնկին, այսինքն՝ կործանման եզրին գտնվող մի բուռ Արցախն է խորհրդանշում , կարող է,այո, ջրվեժի ուժով ահեղ շառաչել, ոտքի կանգնել իր ոտնահարվող իրավունքները պաշտպանելու համար:

---

[1] ***Հուրունց Լ.,*** *Ինչպես հասցնեմ ճիչս սերունդներին, Երեւան, «Տի առ ֆիքս» ՍՊԸ, 2004, էջ 21:*

Բոլոր ճշմարիտ բանաստեղծները անսխալ պայծառատեսներ են նաեւ : Վազգեն Օվյանը կանխազգում էր հասունացող փոթորիկը մեր ազատագրական շարժումից դեռեւս 10 տարի առաջ: «Այս Ղարաբաղն է՝ մեր սուրբ օջախը, ծուխը ծխանի, որ բարձրացել է եղեգան փողից»,- ի լուր բոլոր զեղծարարների ու բռնակալ հափշտակիչների, ազդարարում է բանաստեղծը: «Եղեգան փողից բարձրացող մեր օջախների ծուխը վկայությունն է, որ Հայկի ու Բելի, հուրհեր Վահագնի առասպելական ժամանակներից ի վեր, Արցախը հայ է եղել, Հայաստան աշխարհի մի անառիկ բեկորը,որը «զորավարներ է տվել աշխարհին՝ինքը մնացել առանց զորապետ»:

«Պղծված հոգիներ: Քանի՞սն են իմ Ղարաբաղում:Երկատված մարդիկ,որ մի բան ասում՝մեկ այլ բան են մտածում: Պարզվում է ՝ մարդու հետ ամեն ինչ կարելի է անել՝նրանից պարաններ հյուսել ՝ընդամենը մի տարրական խայծ ունենալով՝մի կտոր հաց:Անիծված լինես, հացի կտոր, առանց որի մարդը չի կարող….որ ընդունակ ես ծունկի բերել նրան ցանկացած կեղծ կուռքի առաջ»[1:]

«Հացի կտորին» ազգի շահը ստորադասող ստրկամիտ ու դիմազուրկ այս ապազգային տարրերին, որոնք վերևներում դիրք ունեն, նկատի ունի բանաստեղծը՝ «գաճաճ թփերի հույսին մնացել» տողում: «Այս Ղարաբաղն է» տողը», որն ասքում կրկնվում է 18 անգամ, ոչ միայն հուզական լիցք է հաղորդում համանուն երկին, կարող է վերնագիր լինել յուրաքանչյու գլխի համար:

Բանաստեղծական խոսը գերշիկացման է հասնում ասքի վերջին հատվածում. Ղարաբաղը Ձենով Օհանի տագնապի գոչն է, որ «Սասնա Դավթին դուրս բերեց հորից»: Սասնա Դավիթը՝մեր միամիտ, լավատես ու հավատավոր ժողովուրդը՝ հուսավառ հայացքը հառած Հյուսիսին, ցայսօր արդարություն է ակնկալում, իսկ «Հյուսիսը սարցալեռ է, քար է աշխարհը, Հայ Ղարաբաղ»:/Հովհաննես Շիրազ/:

Կարծես հենց այսօրվա համար է ասված՝ Ղարաբաղը Ձենով Օհանի գոչն է: Ղարաբաղն, այո՝ Ձենով Օհանի տագնապի գոչը եղավ, որը, ոչ միայն հայ ժողովրդին քնից արթնացրեց, այլև քրիստոնյա աշխարհի ուշադրությունը պանթուրքիզմի հրեշավոր ծրագրի վրա բեւեռեց, ինչը սոցիալիզմի ժամանակ թուրք ազերիների կողմից այնքան ցինիկորեն իրագործվում էր Արցախում: Արցախյան աշխարհասասան ազատագրական շարժումը, հիրավի, ահեղագոչ եղավ համայն քրիստոնյա աշխարհի համար: Տող առ տող բյուրեղանում է բանաստեղծական խոսքը, որն արծվի ճախրի է նման եւ սքանչացնեում է իր փառահեղ սլացքով: Ահավասիկ. «Հպարտ թեւելու այն վեհ խոյանքը,որ հատուկ է մեր թեւերին միայն» տողերը, որոնք այդ տարիներին տպագրված դիմազուրկ ու

---

[1] ***Հուրունց Լ.,*** *Ինչպես հասցնեմ ճիչս սերունդներին, Երեւան, «Տի առ ֆիքս» ՍՊԸ, 2004, էջ 22:*

պատեհապաշտ ներբողներով լցոնված տասնյակ գրքեր արժեն: Ասքի վերջնահատվածում բանաստեղծը պահանջում է դիմակավորված բարեկամից ու թշնամուց.

Այս հողի վրա դու զգույշ քայլիր,
Մաքրիր ոտքերդ, դիմակդ հանիր…
Լեռները լուռ են,բայց ոչ խուլ ու կույր՝
Տեսնում են, զգում, քարը խոսում է,
Քարը ասում է,
Հին հրաբխի խառնարանում դեռ հուրը չի պաղել…

Ասել է թե, ազատագրական պայքարի հուրը, որ դարեր շարունակ անառիկ է պահել Արցախը, դուրս է ժայթքելու որպես ցասման լավա, հնչելու է պայքարի սրբազան շեփորը, և «կարմիր հոկտեմբերի» կողմից Ադրբեջանին ընծայված հինավուրց Արցախը ոտքի է կանգնելու իր բռնադատված ազատությունն ու անկախությունը պաշտպանելու համար: Ահա այսպես է մարգարեացել Վազգեն Օվյանը «Այս Ղարաբաղն է» ասքում, որին համարժեք երկ գոյություն չունի արցախյան գրականության մեջ: Այս ասքը բանաստեղծի ոգեղեն թռիչքն է, նրա ճշմարիտ ու ազգապահ քանքարի հորդահույզ սլացքը: Դժնդակ իրականության մեջ, չհանդուրժելով ոչ մի զսպաշապիկ , նրա զգացմունքները հորդում են ուղղակի …… Հիացումի ու անձնվիրման, հպարտության, ցասման ու բողոքի,ատելության ու արհամարհանքի եւ ահեղ սաստի խիզախ սլացքով,խորը և ճշմարտացի բովանդակությամբ, կատարման վարպետությամբ, խոսքի պատկերավորման միջոցների անթերի կիրառմամբ «Այս Ղարաբաղն է» երկը կարող է դասվել հայ գրականության հայրենասիրական թեմայով գրված լավագույն ստեղծագործությունների շարքը: Այն Արցախի «Ես իմ անուշ Հայաստանին « է: Երբ բանաստեղծական խոսքը հստակ է եւ համարձակ, անկեղծ է և հուզառատ, անվրեպ հասնում է լսարանին և կատարում իր առաքելությունը՝ հայրենասիրության և ազգային արժանապատվության գիտակցության փրկարար լույսը վառում մարդկանց սրտերում: «Այս Ղարաբաղն է» ասքը բարձրաթռիչ ստեղծագործություն է եւ կատարում է իր ազգապահ առաքելությունը՝ իրականացնելով Նժդեհյան՝ ինչ արժե հանճարը,եթե այն չի նպաստում ցեղի ընդերքից շանթանման հերոսներ ծնելու սրբազան առաքելության իրականացմանը, պատգամը:

Ահա թե ինչ է գրել «Այս Ղարաբաղն է» ասքի գնահատողներից մեկը՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի Տորոնտոյի մարմնի ատենապետ հարգարժան Մկրտիչ Մկրտչյանը. «Ես աթոռիս մեջ մխրճված եւ մարմինս փշաքաղված ունկնդրում էի այդ սքանչելի գործը, երբ մեծ ծափահարություններով քերթվածքն ավարտվեց , իմ քով նստած իմ մոտիկ բարեկամին հարցրի, թե ով է այդ գլուխգործոց բանաստեղծության հեղինակը եւ խնդրեցի այդ քերթվածքից մի օրինակ գտնել ինձ համար»: Այս մեծ բարերաի հովանավորությամբ լույս ընծայվեց «Լեռների լեգենդը»

գիրքը: Օվյանի քնարերգության ոսկեհուռ թագի աննման գոհարն է «Այս Ղարաբաղն է» երկը եւ այն անպայման պետք է ընդգրկել հանրակրթական դպրոցի միջին եւ բարձր դասարանների դասագրքերում՝ որպես ծրագրային երկ, Արցախում չգերազանցված գրական կոթող:

Գրականություն

1. Հուրունց Լ., Ինչպեսհասցնեմճիչսսերունդներին, Երեւան, «Տիառֆիքս», 2004:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Ա. Խանյանը: